ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՏՊՈԶԻՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԹԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՆԱՆՅԱՆ Հ. Գ.

Փիլիսոփայության պատմությունը, լինելով մեկ միասնական ամբողջություն, բաղկացած է միմյանց հաջորդող բազում ու բազմապիսի փիլիսոփայական ուսմունքներից ու համակարգերից: Վերջիններս դիտարկելով որպես պարադիգմաներ (Թ. Կուն) կամ «հետազոտական ծրագրեր» (Ի. Լակատոշ)՝ փորձենք անտիկ փիլիսոփայության օրինակի վրա դրանց հերթափոխությունը ներկայացնել գիտության վերակառուցման հետպոզիտիվիստական մեթոդաբանության տեսանկյունից, շեշտը դնելով ոչ այնքան պատմության՝ տրանսցենդենտ գործոնների, որքան փիլիսոփայության զարգացման ներքին տրամաբանության՝ իմանենտ անհրաժեշտության վրա: Ըստ այդմ, «պարադիգմա» և «հետազոտական ծրագիր» հասկացություններն օգտագործվելու են զուգահեռ և համարժեք, քանզի ինչպես Կունն է նշում, իր և Լակատոշի հայացքները գիտության մեթոդաբանության վերաբերյալ շատ հարցերում սերտորեն համընկնում են, թեև ոչ բոլոր դեպքերում է նա համաձայն Լակատոշի հետ[1]: Տվյալ դեպքում մեզ համար թերևս ամենահիմնական անհամաձայնությունը գիտական տեսությունների հերթափոխման եղանակի մեջ է: Եթե ըստ Կունի՝ անհնար է որևէ տրամաբանական կապ հաստատել միմյանց փոխարինող պարադիգմաների միջև, ապա ըստ Լակատոշի՝ «հետազոտական ծրագրի» մեթոդաբանությամբ գիտական գիտելիքի կազմակերպման և հերթափոխման սխեմայի տեսանկյունից գիտական տեսությունները քննարկվում են ոչ թե մեկուսացված, այլ փոխկապակցված: Տվյալ դեպքում կարևորն այն է, որ այս հիմնական և այլ ոչ սկզբունքային տարբերություններով հանդերձ՝ նրանք պարադիգմայի և «հետազոտական ծրագրի» տակ հասկանում են նույն բանը[2]:

Եվ այսպես, փիլիսոփայության պատմության մեջ մեզ հայտնի առաջին փիլիսոփայական պարադիգման կամ «հետազոտական ծրագիրը» Թալեսի ուսմունքն է, որի շնորհիվ առաջին անգամ ձևակերպվեց նրանց «անփոփոխ միջուկը»՝ կեցությունն իր անկապտելի հատկանիշներով, որը և պահպանվեց հետագա բոլոր գոյաբանական պարադիգմաներում: Սկզբնական շրջանում կեցությունը նույնացվեց նախասկզբի հետ, և հարց առաջացավ, թե ինչի՞ց և ինչպե՞ս է առաջացել Տիեզերքը: Վերջինս կարելի է ներկայացնել հետևյալ պարզագույն հավասարմամբ՝ S=x: Հավասարման անհայտ անդամին Թալեսը տալիս է «ջուր» արժեքը՝ S=Ջ: Սակայն լինելով մաթեմատիկոս՝ նա

---

[1] Кун Т. *Структура научных революций, М., 2003, с. 579.*

[2] *Նույն տեղում, էջ 581:*

անմիջապես նկատում է, որ Տ≠Ջ, և հաջորդ քայլով իսկ ջրին վերագրում է լրացուցիչ որակներ՝ f(Ջ): Ըստ այդմ՝ դա արդեն ոչ թե սովորական ջուր է, այլ նախասկիզբ (նաև շարժման), կենդանի տարերք՝ աստվածային, շնչավորված ու ոգեղեն[3]: Սրան ավելանում են նաև այդ միջուկի «պաշտպանական ամրագոտին»՝ իր «օժանդակ հիպոթեզներով»՝ դիցաբանական պատկերացումներ, ջրի պաշտամունք, բոլոր սերմերում խոնավության առկայություն: Վերջիններս, սակայն, չեն փրկում պարադիգման խոցելիությունից, քանի որ ջուրը՝ որպես նախասկիզբ, չափազանց որոշակի է, զուրկ վերացականությունից ու խիստ սահմանափակ՝ ընդամենը մեկը {a}: Բնական է, որ այս տեսակետը չբավարարեց Թալեսի աշակերտ Անաքսիմանդրեսին, որն էլ, նկատելով վերոհիշյալ «գլուխկոտրուկները», փորձեց հաղթահարել դրանք: Նրա կարծիքով բոլոր իրերն առաջացել են ոչ թե ինչ-որ նյութական մեկ նախասկզբից, այլ անսահմանից՝ ապեյրոնից, որը, ըստ էության, համաշխարհային տարածություն է: Անաքսիմանդրեսը, Թալեսի պարադիգմայի անհայտը փոխարինելով ապեյրոնով, գտնում է, որ ապեյրոնը միաժամանակ գերագույն օրենք է, կարգ ու կարգավորվածություն: Բայց այս դեպքում էլ ապեյրոնը զուրկ է որոշակիությունից, վերացական է ու անսահմանափակ {a,b,c,….}: Նման մոտեցումն արդեն իրավամբ չի բավարարում Անաքսիմենեսին. վերադառնալով այն մտքին, որ սկզբնաղբյուրը, այնուամենայնիվ, պետք է լինի մեկը և նյութական, նա բոլոր իրերի նախասկիզբը համարում է օդը[4]: Դրանով նա կարծես փորձում է միացնել Անաքսիմանդրեսի ուսմունքը Թալեսի ուսմունքին: Ապեյրոնի համեմատ օդը որոշակի է և միաժամանակ վերացական, մի կողմից այն անսահման է, մյուս կողմից՝ սահմանափակ, մի կողմից անզգայելի է, մյուս կողմից՝ զգայելի, այսինքն՝ միջին դիրք է գրավում ապեյրոնի ու ջրի միջև: Քսենոփանեսը նախասկիզբը համարում էր հողը: Շարունակելով իր նախորդներին՝ Հերակլիտեսը համոզված է, որ տիեզերքը և նրա մեջ գտնվող բոլոր իրերն ու երևույթներն առաջացել են կրակ նախանյութից[5]: Կրակի ընտրությամբ Հերակլիտեսը լուծում է երկու խնդիր, նախ՝ նա ոչ թե ժխտում է իր նախորդներին, այլ կարծես ընդհանրացնում է նրանց ուսմունքները: Ըստ Հերակլիտեսի՝ ջուրը կրակի միայն մի վիճակն է: Խտացման ճանապարհով կրակը վերածվում է օդի, օդը՝ ջրի, ջուրը՝ հողի: Մյուս կողմից՝ շարժումը, լինելիությունը, ծագումն ու ոչնչացումը հիմնավորելու համար ամենահարմարը թերևս կրակն է՝ փոփոխական, ինքնաշարժ, հոսուն[6]: Ըստ այդմ, Հերակլիտեսի «հետազոտական ծրագրի» միջուկը ոչ միայն կրակի ու համընդհանուր շարժման, դրա սկզբնապատճառի երկատման (ի դեմս հակադրությունների միասնության ու պայքարի օրենքի), այլև բանականության (լոգոսի) մասին ուսմունքն է:

---

[3] **Алексеев П. В., Панин А. В.** *Философия, М., 2003, с. 90.*

[4] **Аристотель.** *Сочинения в 4-х томах , т. 1, М., 1976, с. 72.*

[5] *Նույն տեղում:*

[6] **Гегель.** *Сочинения в 2-х томах, т. 2, М., 1977, с. 466.*



Այսպիսով, վերոհիշյալ բոլոր փիլիսոփաների «հետազոտական ծրագրերի միջուկը» նյութական մեկ նախասկիզբն է: Բնական է, որ նույնանման ու նույնատիպ են նաև այդ «միջուկին» վերագրվող լրացուցիչ որակները: Այդ պարադիգմաներով կարծես ամբողջանում է Տիեզերքի առաջացման Հին արևելքի դասական սխեման՝ S=∑ 4 տարրեր: Հաջորդ փուլում նախասկզբի որոնմանն ավելանում է նաև դրա շարժման նախապատճառի որոնումը[7]: Ավարտվում է նաև աշխարհի դիտարկումը միայն որակի տեսանկյունից, թեև նախկինում արդեն նկատվում էր դրա դիտարկումը նաև քանակի տեսանկյունից: Խնդիր, որ փորձեցին լուծել պյութագորականները: Ըստ նրանց՝ տիեզերքում ամեն ինչ հիմնված է թվի կամ թվային հարաբերության վրա: Թիվն իրերի գոյության հիմքն է, նրանց էությունն ու ձևը, հոգին ու ղեկավարող բանական սկզբունքը[8]: Թվերի միջև որոշակի հարաբերությամբ է, որ ստեղծվում է համաշխարհային, տիեզերական ներդաշնակություն: Հասկանալով, որ իրերը միմյանցից տարբերվում են ոչ միայն քանակական տեսանկյունից, այլև որակական, նրանք ստիպված էին թվերին վերագրել նաև որակական հատկություններ ու հակադրություններ (զույգ և կենտ, կատարյալ և անկատար)՝ դրանով իսկ շարունակելով որակի հարցում իրենց նախորդների ձեռքբերումները: Հետևաբար, որակը, միանալով քանակին, տալիս է կեցություն, իր բուն և ուղղակի իմաստով, որն էլ դառնում է Պերմանիդեսի հետազոտության առարկան: Պերմանիդեսը կեցությունը նույնացնում է մտածողության հետ. կեցությունը մտածողություն է կեցության մասին, իսկ կեցության մասին մտածողությունն էլ կեցությունն է[9]: Դրանով նա վեր է հանում կեցության ու մտածողության փոխհարաբերության հարցը՝ նույնացնելով, բայց և միաժամանակ առանձնացնելով զգայականը մտածականից: Նրա կարծիքով՝աշխարհը հավասար է աշխարհի ողջ բազմազանության գումարին՝ U=∑, և փորձում ապացուցել այդ բազմազանության հնարավորությունը: Վերջինիս հիմնավորման ճանապարհին Պերմանիդեսը եզրահանգում է, որ թեև ամեն ինչ փոփոխվում ու շարժվում է, սակայն կեցությունը մեկն է ու միասնական, անփոփոխ է ու անշարժ: Հետևությունը տրամաբանական էր, քանի որ նա թեև ելնում էր կեցությունից, սակայն մեկ ու անհակասական նախասկզբից:

---

[7] **Аристотель.**, *т. 1, с. 72.*

[8] *Տե՛ս* **Платон.** *Сочинения в 3-х томах, т. 2, М., 1972, с. 485-489.*

[9] **Фролов И. Т.** *Введение в философию, М., 1989, с. 95.*

Պերմանիդեսի այս գաղափարը հիմնավորելու համար Զենոնն առաջ քաշեց մի շարք տրամաբանական պարադոքսներ՝ ապորիաներ: Դրանց միջոցով նա փորձեց ապացուցել, որ կեցությունը միասնական է ու անշարժ, իսկ բազմությունն ու շարժումը, տարածությունն ու ժամանակը, այնուամենայնիվ, հնարավոր չէ պատկերացնել առանց հակասությունների. եթե անգամ հնարավոր է, ապա անհնար է մաթեմատիկական-տրամաբանական միջոցներով դրանք ներկայացնել: Այդ իսկ պատճառով նրանք ոչ թե կեցություն են, այլ ոչ կեցություն: Առաջին հայացքից այս «բացասական էվրիստիկան» հետագայում վերածվեց «դրական էվրիստիկայի», քանզի Զենոնի ապորիաները մեծ դեր խաղացին անտիկ և հետագա դիալեկտիկայի, գիտության, մասնավորապես տրամաբանության և մաթեմատիկայի զարգացման գործում[10]: Բայց և այնպես, Զենոնի ապորիաները ժամանակի իմացաբանության մեջ, մասնավորապես մաթեմատիկայում, ստեղծեցին ճգնաժամային վիճակ, որի հաղթահարման ճանապարհին ծնվեց Դեմոկրիտեսի ատոմիստական ուսմունքը:

Բայց մինչ այդ Էմպիդոկլեսը և Անաքսագորասը դրեցին նոր հիմնահարց՝ կեցության վերլուծման և համադրման: Այդ խնդիրը լուծելու համար Էմպիդոկլեսը փորձում է Պերմանիդեսին հաշտեցնել Պյութագորասի հետ՝ պնդելով, որ գոյը և՛ միասնական է, և՛ բազում, քանզի միայն մեկ նախահիմքից չի կարելի բխեցնել բազմազանության գոյությունը. դա բացատրելու համար անհրաժեշտ է ընդու-նել բազում, բայց սահմանափակ հիմքեր՝ հողը, ջուրը, օդը, կրակը {a,b,c,d}, որոնք հավերժ են ու անփոփոխ: Քանի որ դրանք անշարժ են, ուստի շարժումը բացատրելու համար Էմպիդոկլեսն առաջինն է մեկ սկզբնապատճառի փոխարեն ուղղակիորեն ընդունում երկու տիեզերական ուժերի՝ Սիրո և Ատելության գոյությունը, որոնց հակադիր փոխազդեցության շնորհիվ էլ տիեզերքում տեղի են ունենում միացման ու քայքայման գործընթացներ[11]: Շարունակելով առաջադրված խնդրի լուծումը, ի տարբերություն Էմպիդոկլեսի, Անաքսագորասն ընդունում է անսահմանափակ և անվերջ մասնիկների բաժանվող անսահման թվով «սերմերի» կամ հոմեոմեր-ների գոյությունը: Կեցությունը, ըստ Անաքսագորասի, տարբերությունից ու բազմազանությունից զերծ միասնություն չէ, բայց զուրկ է շարժման հատկությունից: Շարժումը կեցությանը հաղորդվել է դրսից: Այդ տիեզերական ուժը նա կոչում է Նուս (Միտք, Բանականություն)՝ դարձյալ վերադառնալով շարժման մեկ սկզբնապատճառի, Առաջնաշարժիչի գաղափարն ընդունող նախկին մտածողների կարծիքին[12]: Նրա «հետազոտական ծրագիրը» թեև չլուծեց Զենոնի առաջադրած խնդիրը, սակայն գաղափարները սերմերի կամ հոմեոմերների մասին հող նախապատրաստեցին Լևկիպոսի և Դեմոկրիտեսի ատոմիստական ուսմունքի առաջացման համար:

---

[10] **Кондаков Н. И.** *Логический словарь – справочник, М., 1975, с. 182.*

[11] **Аристотель.** *Метафизика (Сочинения в 4-х томах, т. 1, с. 74).*

[12] **Асмус В. Ф.** *Античная философия, М., 1976, с. 83.*

Առարկելով բազմության ու շարժման անհնարինության էլիաթների ուսմունքին՝ Դեմոկրիտը գտնում էր, որ գոյություն ունեն անսահման բազմությամբ աշխարհներ, որոնք կազմված են անթիվ, անհամար ատոմներից ու դատարկությունից: Դատարկությունը աշխարհների ու ատոմների միջև է՝ շարժման հնարավորության համար, իսկ ատոմները չունեն դատարկություն և անբաժանելի են: Դրանով ատոմիստները լուծում են բազմության գոյության դեմ բերվող զենոնյան ապորիաները, ինչպես նաև հերքում Պերմանիդեսի այն պնդումը, թե կեցությունը բազմություն չէ: Զգտելով գտնել շարժման պատճառը՝ Դեմոկրիտեսը «մասնատում» է Պերմանիդեսի միասնական կեցությունը բազմաթիվ առանձին «կեցություն» ատոմների: Ատոմները նույն սեռի են և տարբերվում են միայն իրենց ձևով, դրությամբ, տեղով: Դրանց տարբեր համակցությունն էլ ստեղծում է աշխարհի բազմազանությունը: Թեև ատոմները չունեն ոչ մի շարժում, սակայն ատոմիստները մերժում են շարժումը դրսից ներմուծելու անաքսագորասյան տեսակետը[13]: Ի սկզբանե ատոմները շարժվում են դատարկ տարածության մեջ, անկարգ ու անհավա- սարաչափ, բախվում են իրար, փոխում իրենց ուղղությունը, բայց շարժվում են ուղղագիծ ու անհրաժեշտաբար, առանց պատահական շեղումների: Եվ այսպես, Զենոնի քննադատությամբ իմացության համար առաջացած վտանգավոր ճգնաժամի մի հանճարեղ փորձ էր ատոմիստական հետազոտական ծրագիրը, հագեցած հսկայական «դրական էվրիստիկայով»: Դեմոկրիտեսը հանդիսացավ հին աշխարհի մատերիալիստական «հետազոտական ծրագրերի» գագաթը, որով ավարտվում է հին աշխարհի գոյաբանությունը: Դրանով վերջինս, հասնելով իր զարգացման գագաթնակետին, մտնում է փակուղի: Անտիկ փիլիսոփայության մտքի զարգացման հաջորդ փուլը տրամաբանական է, որ պետք է դառնային իմացաբանության՝ կեցության ճանաչողության և սոցիալ-քաղաքական՝ սոցիալական կեցության պրոբլեմները: Գոյաբանական պարադիգմաների բազմաքանակությունն ու բազմատեսակությունը, ներքին հակասականություններն ու միմյանց նկատմամբ հակադրություններն անտիկ մտածողներին հանգեցրին այն համոզման, որ նման իրավիճակը վկայում է, որ այդ բոլոր «հետազոտական ծրագրերը» մարդկային մտքի ստեղծագործության արդյունք են, և գոյություն չունի օբյեկտիվ ճշմարտություն, քանի որ դրանք կարծիքներ են, որոնց իմացական արժեքը կախված է ընտրությունից և համոզելու վարպետությունից: Ուստի ավելի ճիշտ է ուսումնասիրել մարդկային մտածողությունը, քան բնությունը: Եվ պատահական չէ, որ իմացության հիմնախնդիրները դառնում են սոփեստների «հետազոտական ծրագրերի միջուկը»: Սոփեստները վերցնում են Հերակլիտեսի հակադրությունների մասին ուսմունքը և կիրառելով իմացության նկատմամբ՝ փորձում են գտնել ճշմարտության չափանիշը, քանզի հակադրությունների ընդունումը, դրանցից որևէ մեկի ընտրությունը պահանջում է ճշմարտության չափանիշ: Բայց, ըստ Պրատոգորասի,

[13] Նույն տեղում, էջ 139:

զգայականը կասկածելի է, այն կարող է լինել միայն կարծիք, քանի որ փոփոխական է, անկայուն, ուստի այն չի կարող լինել գիտելիքի աղբյուր և տալ հավաստի ճշմարտություն: Ստացվում է անելանելի հակասություն՝ մի կողմից անհնար է ճշմարտության որևէ օբյեկտիվ չափանիշ, մյուս կողմից՝ ճշմարտության չափանիշը անհրաժեշտ է ու պարտադիր: Իրավիճակից դուրս գալու համար Պրոտագորասն ամեն ինչի չափանիշը համարեց մարդուն[14]: Այդ պատճառով սոփեստներն իրենց ուշադրությունը սկսում են կենտրոնացնել մարդկային գործունեության գործնական կողմի՝ մտածողության և հասկացությունների ճկունության, հակադրությունների նույնության վրա: Ի վերջո, նրանք ծայրահեղության հասցրին ամեն մի գիտելիքի հարաբերականության միտքը. նրանց փիլիսոփայությունը ստացավ կասկածապաշտական ու հարաբերապաշտական բնույթ: Մեր բոլոր ընկալումները սուբյեկտիվ են, չկա օբյեկտիվ գիտելիք, ճշմարտության ընդհանուր չափանիշ, ամեն ինչ հարաբերական է, հետևաբար, բոլոր կարծիքներն էլ ճշմարիտ են: Եթե Պրոտագորասը ասում էր, թե ամեն մի կարծիք ճշմարիտ է, ապա Գորգիասը պնդում էր, որ ամեն մի կարծիք կեղծ է[15]: Եվ այսպես, սոփեստները կանգ առան ճշմարիտ գիտելիքի հարաբերականության վրա՝ հող նախապատրաստելով սուբյեկտիվությունից զերծ ճշմարտության որոնմանը: Այդ որոնումները շարունակեց Սոկրատեսը, որը հանգեց այն եզրակացության, որ ճանաչողության բարձրագույն աստիճանը բանականությունն է, որն ի վիճակի է տալ ոչ միայն անհատական կարծիք, այլև համընդհանուր, համապարտադիր գիտելիք: Սոկրատեսի գլխավոր իմացաբանական համոզմունքն է, որ գիտելիքը կարող է լինել միայն և միայն բանական: Այսպիսով, սոփեստների իմացաբանական կասկածամտությանը փոխարինելու եկավ բանականության միջոցով հավաստի գիտելիք ստանալու վստահությունը: Սոկրատեսի փիլիսոփայության «հետազոտական ծրագրի» մեջ հիմնականը հասկացությունն է ու նրա սահմանումը[16]: Բարձրագույն հասկացություններն են Բարին, Արդարությունը, Ճշմարտությունը: Վերջիններս անհրաժեշտ են, որ մարդը գործի՝ լինելով առաքինի և արդարամիտ: Ճշմարտությանը հասու լինելու տարբեր ուղիներ կան. գլխավորներն են հեգնանքը, ինդուկցիան, մանտիկան կամ դիալեկտիկան՝ որպես նոր գիտելիքի ծնման երկխոսության եղանակ: Այսինքն՝ ճանաչողությունը, ըստ Սոկրատեսի, ոչ թե պատրաստի ու ավարտուն գիտելիք է, այլ դրան հասնելու մի անվերջ գործընթաց: Առաջինը նա է հանգել այն մտքին, թե ճշմարտությունն այն դեպքում է ճշմարտություն, եթե ապացուցված է: Եվ ըստ այդմ, սկսած Սոկրատեսից, Պլատոնի և Արիստոտելի միջոցով, անտիկ փիլիսոփայության զարգացումն ստացավ ինտելեկտուալիստական բնույթ: Բարոյագիտության հարցերում ևս Սոկրատեսի ուսմունքը խստիվ տարբերվում է սոփեստների ծայրահեղ ռելյատիվիզմից: Նրա

[14] Նույն տեղում, էջ 100:

[15] Аристотель, т. 1, с. 134.

[16] Նույն տեղում, էջ 79:

բարոյագիտությունը ռացիոնալիստական է, քանի որ բարիքը նույնացնում է գիտելիքի հետ: Բարոյական չարիքը չիմացության հետևանք է, իսկ բարոյական կատարելության աղբյուրը գիտելիքն է: Քանի որ գիտելիքը բարիք է, ապա դա արդեն նշանակում է հետևել այդ բարիքին, իսկ վերջինս էլ մարդուն դարձնում է երջանիկ: Արիստոտելը հետո պետք է ասեր, որ իմանալ ճշմարտությունը դեռ չի նշանակում գործել ըստ այդ ճշմարտության: Գուցե դա գիտակցում էր և Սոկրատեսը, բայց նա փորձում էր մարդկային բուն գիտակցության մեջ գտնել այնպիսի մի ամուր հենք, որի վրա հնարավոր լիներ կանգնեցնել բարոյականության, իրավունքի և պետության շենքը, այն բանից հետո, երբ հին, ավանդական հենքն արդեն քայքայել էին սոփեստները:

Սոկրատեսի հիմնական դրույթները հետագայում զարգացվեցին սոկրատեսյան դպրոցներում՝ մեգարական, կինիկների և կիրենեյան: Մեգարական դպրոցը միակցում էր կեցության մասին էլիաթների ուսմունքը բարիքի մասին սոկրատեսյան տեսության հետ: Էլիաթների պես նրանք կարծում էին, որ զգայություններով ընկալվում է միայն փոփոխականը և անցողիկը, իսկ բանականությամբ՝ անփոփոխը և հավերժականը: Մեգարացիները, առաջ տանելով Սոկրատեսի գաղափարները, ապացուցում էին, որ իմացության առարկան կարող է լինել միայն հասկացությունների միջոցով հասանելի ընդհանուրը, քանի որ այն համընկնում է միասնականի, բարիքի հետ և իր բնությամբ անփոփոխ է: Սոփեստների և Սոկրատեսի փիլիսոփայությունը յուրօրինակ մեկնաբանություն ստացավ կինիկների դպրոցում (Անտիթենես): Նրանք հանդես եկան ընդհանուր հասկացությունների մասին սոկրատեսյան ուսմունքի դեմ: Ըստ այդմ՝ գոյություն ունեն միայն եզակի իրեր և դրանց համապատասխան եզակի հասկացություններ: Ժխտելով տեսական փիլիսոփայության հնարավորությունը՝ կինիկները ստեղծում են իրենց նոմինալիստական, անհատապաշտական գոյաբանությանը համապատասխան բարոյագիտություն կամ գործնական փիլիսոփայություն, պնդելով, որ իմաստությունը ոչ թե մարդուն անմատչելի տեսական գիտելիքի, այլ միայն բարիքի ճանաչման մեջ է: Իսկ ճշմարիտ բարիքը ոչ թե վերացական ընդհանուր, այլ կոնկրետ անհատական բարիքն է, որն ամեն մարդ պետք է փնտրի իր մեջ: Նրանք երջանկության ու առաքինության հիմք էին համարում արհամարհանքը դեպի հասարակական նորմերը, փառքը, բոլոր զգայական հաճույքները: Եվ վերջապես կիրենյան դպրոցը (Արիստիպոս). ժխտելով տեսական փիլիսոփայությունը՝ կարծում էին, որ փիլիսոփայությունը գործնական բնույթ ունի: Եթե Սոկրատեսը ճանաչողության խնդիրը համարում էր ընդհանուր հասկացությունների կազմավորումը, ապա կինիկները, սոփեստների նման, ժխտելով ընդհանուրի գոյությունը, հենվում էին միայն զգայական տվյալների վրա, համարելով դրանք ճշմարտության չափանիշ: Վերջինս էլ հանգեցնում էր զգայապաշտական տեսության, որի վրա է խարսխվում նրանց հեդոնիստական (հաճույապաշտական) բարոյագիտությունը: Մարդու գոյության իմաստը երջանկության մեջ է, իսկ երջանկությունը կարող է ձեռք բերվել զգայական բավականության միջոցով:

Ուստի այն ամենը, ինչ մարդուն հաճույք է պատճառում, բարիք է, իսկ ինչը նրան զրկում է հաճույքից և բերում տառապանք, չարիք է:

Մինչ այս անտիկ փիլիսոփայության «հետազոտական ծրագրերի» հիմնական և գերակշռող տիպը մատերիալիզմն էր: Այն իդեալիստական միտումները, որ դրսևորվում էին որոշ ուսմունքներում, դեռ չէին վերածվել գիտակցված համակարգի: Սոկրատեսը եղավ օբյեկտիվ իդեալիզմի ուսմունքի առաջացմանը նպաստող առաջին խոշոր փիլիսոփան: Հանձին Պլատոնի՝ հին հունական իդեալիզմը, առաջին անգամ վերածվելով կուռ համակարգի, հանդես է գալիս աշխարհայացքի ձևով՝ հակադրվելով մատերիալիզմին: Այսպիսով, մատերիալիզմն ու իդեալիզմն արդեն հանդես են գալիս որպես երկու հիմնական, միմյանց հետ «մրցակից հետազոտական ծրագրերի» լիովին ձևավորված հակադրություն և իրենց պայքարով որոշում փիլիսոփայության զարգացման հետագա ընթացքը: Ելնելով սոփեստների ու Սոկրատեսի իմացաբանության հաջողություններից՝ Պլատոնն իր առաջ խնդիր դրեց պյութագորականության հենքի վրա միացնել Հերակլիտեսի ուսմունքը էլեաթների ուսմունքին: Այսինքն՝ միացնել կեցության և ոչ կեցության, կեցության շարժման ու անշարժության գաղափարները: Դրանց միացումը դիալեկտիկայի միջոցով Պլատոնի տեսությունում ստեղծում է հետևյալ բրգաձև համակարգը[17]*.*



Այս բուրգի գագաթին միասնական բարիքի կամ գերագույն բարիքի, գաղափարների գաղափարն է, որը գեղեցիկի, ճշմարտության, ներդաշնակության, համաչափության սկզբնաղբյուրն է: Բարիքը երջանկության և առաքինության, գեղեցիկի ու օգտակարի, բարոյա-

[17] **Алексеев В. Ф., Панин А. В.,** *նշվ. աշխ., էջ 99:*

կանի ու հաճելիի միասնությունն է: Այդ միասնականը, ըստ Պլատոնի, կեցություն չէ, այն վեր է կեցությունից, որն իրեն է ձգում մնացած գաղափարները, որի միջոցով էլ վերջիններս ստանում են իրենց իսկական կեցությունը: Բուրգի հիմքում ընկած է ոչ կեցությունը՝ մատերիական աշխարհը: Գաղափարների աշխարհի՝ կեցության և մատերիական աշխարհի՝ ոչ կեցության միջև են աշխարհի ոգին ու զգայական իրերի աշխարհը: Վերջինս իսկական գոյի աշխարհը չէ, զգայական իրերն անընդհատ ծագում ու կործանվում են, փոփոխվում ու շարժվում են, նրանցում չկա ոչինչ ճշմարիտ ու կայուն: Իսկական գոյերի կամ կեցության աշխարհը գաղափարների, տիպերի, տեսքերի կամ «էյդոսների» աշխարհն է, որը կատարյալ է, հավերժ ու անփոփոխ[18]: Զգայական իրերի աշխարհի յուրաքանչյուր առարկա գաղափարների աշխարհում ունի իր նախատիպը, որոնք գոյություն ունեն ինքնին և իրենց ոչ լրիվությամբ են դրսևորվում կոնկրետ իրերի մեջ: Այս արտաքուստ գեղեցիկ, բայց ներքուստ հակասական սխեմայի անլուծելի «գլուխկոտրուկը» կեցության և ոչ կեցության, գաղափարների և մատերիական աշխարհների միջև կապի հաստատումն ու հիմնավորումն է: Որպեսզի այն ստեղծի, Պլատոնն առաջ է քաշում զգայական իրերի աշխարհի հասկացությունը՝ որպես նրանց կապող օղակ, որով, սակայն, անմիջական կապ չի ստեղծվում նրանց միջև: Պլատոնը ստիպված է լինում կատարել հաջորդ քայլը՝ գաղափարների աշխարհի և զգայական իրերի աշխարհի միջև դնել Համաշխարհային ոգին: Դրա միջոցով միմյանց հետ կապելով կեցությունն ու ոչ կեցությունը՝ ստեղծում է զգայական իրերի աշխարհը, որն արդյունք է ակտիվ գաղափարների և պասիվ մատերիայի միաձուլման: Այն ներառում ու սինթեզում է հակադրությունները, կազմում դրանց միասնությունը, այսինքն՝ իրը=մատերիա+գաղափար: Վերջիններս հակադիր են ոչ որպես հավասարազոր սկզբունքներ: Պլատոնն առաջնայնության իրավունքը տալիս է գաղափարին[19]: Դրանով իսկ Պլատոնը հիմք է դնում իդեալիստական դիալեկտիկային, ինչպես նաև օբյեկտիվ իդեալիզմին, քանի որ մատերիան դիտվում է որպես աննյութականից, նյութին նախագո գաղափարներից ածանցված: Սակայն Պլատոնն այդպես էլ չկարողացավ հիմնավորել անցումը գաղափարների աշխարհից զգայական իրերի աշխարհին և հանճարին վայել արժանապատվությամբ ինքն առաջինը մատնանշեց իր իսկ «հետազոտական ծրագրի» ամենախոցելի կետը:

Այսպիսով, եթե Դեմոկրիտեսը անտիկ մատերիալիստական ուղղության «հետազոտական ծրագրերի» գագաթն է, իսկ Պլատոնը՝ իդեալիստականի, ապա Արիստոտելը դարձավ անտիկ փիլիսոփայական մտքի հանրագիտարանը, ամփոփողն ու սինթեզողը:

Պլատոնյան վերոհիշյալ «գլուխկոտրուկի» մանրազնին քննությունից էլ սկսում է Արիստոտելը իր համապարփակ «հետազոտական ծրագրի» կառուցումը, ընդգծելով, որ պլատոնյան գաղափարները նախորդում են

---

[18] *Տե՛ս* **Платон,** *т. 2, с. 43.*

[19] *Նույն տեղում, էջ 40:*

զգայական իրերի աշխարհին ոչ թե ըստ կեցության, այլ միայն ըստ տրամաբանության: Նրանք չեն կարող ինքնուրույն գոյություն ունենալ ինչ-որ տեղ՝ կտրված զգայական իրերից: Եթե գաղափարները նույնական չեն իրերին, ապա ինչ կերպ են նրանք հաղորդակցվում վերջիններիս հետ[20], իսկ եթե գերզգայական աշխարհում գոյություն ունեցողներն այնպիսին են, ինչպիսին զգայականում, և առաջինում կարող ենք գտնել այն, ինչ կա երկրորդում, ապա այդ պատճառով պարտադիր չէ, որ գաղափարները լինեն ինքնուրույն ու անկախ: Ապացուցելով, որ յուրաքանչյուր իրի էությունն աննյութական է և անհեթեթ է խոսել այն մասին, թե որտեղ է այն, ոչ թե լուծելով գաղափարների աշխարհի ու զգայական իրերի աշխարհի հաղորդակցման պլատոնյան «գլուխկոտրուկը», այլ այն ուղղակի մի կողմ նետելով՝ Արիստոտելը գաղափարներն ի վերջո տեղադրում է բուն իրերի մեջ, նույնացնելով գաղափարն իր նյութական կրողի հետ, համաշխարհային հոգին կամ տիեզերական միտքը մեկնաբանելով որպես աննյութական գաղափարների կամ ձևերի առանցք: Մերժելով իրերից կտրված ինքնին գոյություն ունեցող գաղափարների վերաբերյալ ուսմունքը՝ նա գոյի հասկացությանը տալիս է այլ մեկնաբանություն, քան Պլատոնը: Նույնացնելով գաղափարն իր նյութական կրողի հետ, Արիստոտելը գտնում է, որ յուրաքանչյուր եզակի իր մատերիայի և ձևի միասնություն է: Ձևը մատերիային միացնելու համար նա մտցնում է հնարավորության և իրականության կատեգորիաները: Ձևը՝ որպես իրականություն, իսկ մատերիան՝ որպես հնարավորություն: Ձևը ոչ մատերիական է, բայց այն արդեն դրսից մատերիային ավելացած ինչ-որ այնկողմնային էություն չէ: Պարզապես ձևն այն բանի իրականությունն է, որի հնարավորությունը «մատերիան» է, և, ընդհակառակը, «մատերիան» այն բանի հնարավորությունն է, ինչի իրականությունը կլինի «ձևը»[21]: Գտնելով, որ ողջ աշխարհի գոյությունը բխեցնել միայն ձևի ու մատերիայի գաղափարից հնարավոր չէ, նա դրանց ավելացնում է նաև շարժման և նպատակի սկզբնապատճառները: Դրանց շնորհիվ էլ զգայորեն ընկալելի իրերի աշխարհի սահմաններում, ըստ Արիստոտելի, հնարավոր է հաջորդական անցում ձևից նրան հարաբերակից մատերիային, մատերիայից՝ նրան հարաբերակից ձևին: Բարձրանալով ձևի սանդուղքով՝ ի վերջո հասնում ենք բարձրագույն ձևին՝ առաջին շարժիչին կամ աստծուն, որը գոյություն ունի աշխարհից դուրս և այդ աշխարհի միտքն է, ոգին, էներգիան, պլանը, ծրագիրը: Բայց և այնպես Արիստոտելը պահպանում է կեցության ըմբռնումը՝ որպես անշարժ, անփոփոխ ու կայուն, անհատանելի ու անբաժանելի, ինչը բնութագրական էր էլիաթներին ու Պլատոնին:

Արիստոտելից հետո հիմնախնդրի որոշակի տեղաշարժ է կատարվում փիլիսոփայության հիմնական կողմնորոշման մեջ, նա ավելի շատ կենտրոնանում է առանձին մարդու վրա: Այդ միտումն արդեն նկատվում էր Արիստոտելի մոտ.

---

[20] **Аристотель,** *т. 1, с. 320-324.*

[21] *Նույն տեղում, էջ 241-246:*

այն առավել զարգացում ստացավ սկեպտիկների, ստոիկների ու էպիկուրականների բարոյագիտության մեջ: Պլատոնի և Արիստոտելի սոցիալական էթիկան իր տեղը զիջում է անհատական բարոյագիտությանը:

Սկեպտիցիզմը ծագեց որպես նախորդ փիլիսոփայական մտքի զարգացման արդյունք: Ըստ սկեպտիցիզմի հիմնադիր Պիռոնի ուսմունքի՝ փիլիսոփան մի մարդ է, որը ձգտում է երջանկության: Իսկ երջանկության բարձրագույն աստիճանը կարող է լինել միայն անդրդվելի հանգստությունը, անխռովությունը և տառապանքի բացակայությունը: Ակնհայտ է, որ ստոիկների վրա ազդեցություն են գործել հինարևելյան կրոնախորհրդապաշտական հավատալիքները, մասնավորապես բուդդայականությունը: Ինչ վերաբերում է ճշմարտությանը, ապա ըստ նրանց՝ ճշմարտության չափանիշ ընդհանրապես գոյություն չունի և չի էլ կարող լինել: Տեսակետ, որի հաղթահարմանն էր ուղղված Էպիկուրի փիլիսոփայությունը: Փիլիսոփայության գլխավոր խնդիրն Էպիկուրը համարում էր բարոյագիտության՝ երջանկության հանգեցնող վարքի մասին ուսմունքի ստեղծումը: Բայց բարոյագիտությունը կարող է կառուցվել միայն այն պայմանով, եթե որոշված է մարդու՝ բնության մի մասնիկի գրաված տեղը այդ նույն բնության մեջ: Ճշմարիտ էթիկան ենթադրում է ճշմարիտ գիտելիք աշխարհի մասին: Այդ պատճառով էլ էթիկան պետք է հենվի ֆիզիկայի վրա, իսկ մարդաբանությունը՝ էթիկայի: Իր հերթին ֆիզիկայի մշակմանը պետք է նախորդի իմացության ճշմարտության չափանիշի սահմանումը: Դրանով իսկ Էպիկուրը ձգտում էր ստեղծել բարոյագիտություն Դեմոկրիտեսի ատոմիստական տեսության (շարժման ժամանակ՝ ծանրության ազդեցության տակ, ատոմներն ի վիճակի են փոքր անկյունով ինքնակամ շեղվել շարժման սկզբնական ուղուց և անցնել կորագիծ ուղիների, որով ատոմիստական պարադիգմա է ներմուծվում նաև պատահականությունը՝ որպես մարդու ազատության հիմնական պայման) և Արիստոտելի ճանաչողության մասին ուսմունքի (ձևական տրամաբանության) հիման վրա:

Ստոիցիզմը ծնվեց մեգերական ու կինիկների դպրոցներից (Զենոն Է.)՝որպես բողոք ընդդեմ Էպիկուրի ուսմունքի: Էպիկուրականների նման ստոիկները ևս փիլիսոփայության գլխավոր խնդի-րը համարում էին ֆիզիկայի և ճանաչողության մասին ուսմունքի վրա հիմնված բարոյագիտության ստեղծումը: Ստոիկների ֆիզիկան ծագել է որպես Արիստոտելի ֆիզիկայի, մասնավորապես ձևի և մատերիայի մասին ուսմունքի և Հերակլիտեսի ուսմունքի որոշ տարրերի համադրություն: Ըստ Արիստոտելի՝ մատերիայի ու ձևի հարաբերակցությունը դադարում էր այն սահմանագծում, որն աշխարհը բաժանում է անշարժ սկզբնապատճառից կամ աստծուց, որն այլևս մատերիայի ու ձևի միասնություն չէ, այլ միայն մաքուր ձև՝ առանց մատերիայի: Ըստ ստոիկների՝ ընդհակառակը, աշխարհը միասնական, կենդանի մի մարմին է՝ իրը շնչավորող մարմնական շնչով ներթափանցված: Նրանք աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի խստագույն անհրաժեշտության մասին Դեմոկրիտեսի

ուսմունքը համատեղում են աշխարհի կատարելության և նպատակահարմարության մասին պլատոնյան ուսմունքի հետ:

Ատոմների անվերջ բազմազանության և դատարկության մասին Էպիկուրի ուսմունքին ստոիկները հակադրեցին այն ուսմունքը, ըստ որի աշխարհը միասնական է, և տիեզերական գունդն ամբողջովին լիքն է մարմիններով և «պնևմայով»: Աշխարհի բազմության մասին Էպիկուրյան ուսմունքին նրանք հակադրեցին միասնական աշխարհի գոյության մասին դրույթը, աշխարհում նպատակահարմարության ժխտմանը՝ այն համոզմունքը, որ ամեն ինչ վկայում է համաշխարհային պլանի և համընդհանուր նպատակահարմարության գոյության մասին, Էպիկուրականների աթեիզմին՝ աշխարհ ներթափանցված պնևմայի ու աշխարհում դրսևորվող բանականության աստվածայնության մասին ուսմունքը[22]: Բարոյականության մեջ ստոիցիզմի և Էպիկուրականների միջև եղած հակադրությունը դրսևորվել է ազատության և մարդկային կյանքի բարձրագույն կոչման ըմբռնման հարցում: Ազատությունը, ինչպես այն ըմբռնում է Էպիկուրը, ստոիկների համար անհնարին է: Այսինքն՝ եթե նախորդ բարոյագիտական ուսմունքները անհատի բարոյական կատարելագործման գլխավոր միջոցը համարում էին հասարակության մեջ ներգրավված լինելը, ապա այժմ, ընդհակառակը, փիլիսոփայությունը առաքինի ու երջանիկ կյանքի պայմանը համարում է մարդու ազատագրումը արտաքին աշխարհի իշխանությունից և առաջին հերթին քաղաքական ոլորտից: Ստոիկների համար փիլիսոփայությունը պարզապես գիտություն չէ, այլ կյանքի ճանապարհ, կյանքի իմաստություն: Փիլիսոփայությունն է միայն, որ մարդուն սովորեցնում է կյանքի դժվարին իրավիճակներում պահպանել ինքնատիրապետումն ու արժանապատվությունը: Իմաստունի ուժն այն է, որ նա չի դառնում սեփական կրքերի գերին: Իսկական իմաստունը, ըստ ստոիկների, չի վախենում անգամ մահից: Այստեղից էլ փիլիսոփայության ըմբռնումը՝ որպես մահանալու և մեռնելու փիլիսոփայություն[23]: Ստոիկների համար դրա կատարյալ օրինակը Սոկրատեսն էր: Բայց ի տարբերություն Սոկրատեսի, նրանք առաքինությունը որոնում էին ոչ երջանկության, այլ հանգստի և անվրդովության, արտաքին աշխարհի նկատմամբ անտարբերության համար[24]: Այդ անտարբերությունը նրանք անվանում էին ապատիա (անկրքայնություն): Անկրքայնություն, ահա նրանց բարոյագիտական իդեալը:

Անտիկ փիլիսոփայության վերջին «հետազոտական ծրագիրը» նորպլատոնիզմն է, որն արժանապատվորեն եզրափակեց հիմնախնդրի ավելի քան հազարամյա պատմությունը: Նորապլատոնականության խոշորագույն ներկայացուցիչն էր Պլոտինոսը: Նորպլատոնականությունը պլատոնականությանը հաղորդել է միստիկական բնույթ՝ միախառնելով դրան Արիստոտելի, ստոիցիզմի, պյութագորականության և Արևելքի

---

[22] Տե՛ս **Асмус В. Ф.**, նշվ. աշխ., էջ 452-453:

[23] Տե՛ս **Դավիթ Անհաղթ**, Երկեր, Ե., 1980, էջ 73-80:

[24] Տե՛ս **Кант И.** *Сочинения в 6-и томах, т. 2, М., 1964, с. 230.*

խորհրդապաշտական մի շարք գաղափարներ: Նորպլատոնականության մեջ հիմնականը Պլատոնի եռյակի՝ Միասնականի, Համաշխարհային Մտքի, Համաշխարհային Հոգու, ինչպես նաև զգայական իրերի, մատերիայի և արտահեղման (էմանացիայի) մասին ուսմունքն է[25]: Գոյություն ունեցող ամեն ինչ արտահեղման ճանապարհով առաջացել է Միասնականից, որն ամեն ինչի սկզբնապատճառն է, շարժիչ ուժն ու նպատակը: Առաջինը Միասնականից արտահեղվում է Միտքը, որը նման է պլատոնյան էյդոսների աշխարհին և արիստոտելյան ինքն իրեն մտածող բանականությանը[26]: Մտքից հետո արտահեղման ճանապարհով առաջանում է Համաշխարհային Հոգին, որը վերաբերվում է Մտքին այնպես, ինչպես Միտքը Միասնականին[27]: Հոգին հանդես է գալիս որպես իդեալական և նյութական աշխարհների միջև շաղկապող օղակ: Դրա շնորհիվ արտահեղման վերջին փուլում առաջանում է բնությունը՝ նյութական ու մարմնական իրերի աշխարհը: Բոլոր գոյերը ձգտում են բարիքին, իսկ քանի որ գերագույն բարիքը Միասնականն է, ուստի բոլորը ձգտում են միավորվել Միասնականի հետ: Ձգտումն առ Միասնականն առավել ցայտուն է դրսևորվում մարդու մեջ, քանի որ նա օժտված է բանական հոգով: Այդ նպատակի իրացման պայմանն է իմացական գործունեությունը, բարոյական կատարելագործումն ու մաքրագործումը՝ զգայական-մարմնական հաճույքներից ձերբազատումը: Դրանց շնորհիվ մարդկային հոգին հակառակ շարժմամբ բարձրանում է առ աստված և երկար վարժություններից հետո էքստազի մեջ միանում է նրան: Այսինքն՝ փիլիսոփայության բարձրագույն աստիճանը, ըստ նորպլատոնականների, ձեռք է բերվում ոչ թե փորձի ու բանականության միջոցով, այլ միստիկական էքստազի միջոցով[28]: Նորպլատոնականության «հետազոտական ծրագիրը դրական էվրիստիկա» ապահովեց հատկապես արվեստի, մասնավորապես միջնադարյան ու Վերածննդի, այդ թվում՝ հայ գրականության համար՝ ի դեմս Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության»:

Այսպիսով, անտիկ փիլիսոփայության բազմաքանակ ու բազմապիսի, ներքին տրամաբանությամբ միմյանց հետ անխզելիորեն կապված ուսմունքները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խումբ պարադիգմաների կամ «հետազոտական ծրագրերի»՝ գոյաբանական, իմացաբանական և սոցիալ-քաղաքական, որոնց բոլորի «անփոփոխ միջուկը» կեցությունն է: Գոյաբանականինը բուն կեցությունն է, որպես նախասկիզբ, նրա ատրիբուտ շարժման սկզբնապատճառը, իմացաբանականինը՝ կեցության ճանաչողությունը՝ ճանաչողության տեսական ձևերը՝ ճշմարտությունը և նրա չափանիշը, սոցիալ-քաղաքական կեցությանը, ներառյալ բարոյագիտությանը՝ բարիքը, առաքինությունը, երջանկությունը, պետությունը և նրա ձևերը: Այսինքն՝ անտիկ փիլիսոփայության «հետազոտական ծրագրերի» առանցքը

---

[25] **Асмус В. Ф.,** *նշվ. աշխ., էջ 515:*
[26] *Նույն տեղում, էջ 516:*
[27] *Նույն տեղում, էջ 519:*
[28] *Նույն տեղում, էջ 524:*

կեցություն հասկացությունն է, իսկ կեցությունը՝ որպես մատերիայի կամ իդեայի ըմբռնում, այն առանցքաձողն է, որի վրա հավաքվում են անտիկ փիլիսոփայության բոլոր պարադիգմաները: Հարկ ենք համարում նշել նաև, որ ի տարբերություն բնագիտության պարադիգմաների, փիլիսոփայության, առավելապես անտիկ փիլիսոփայության առաջադրած հիմնարար հարցադրումները հավերժ են, անփոփոխ ու առ այսօր արդիական. դարեդար փոխվել ու փոխվելու են ոչ թե այդ հարցադրումները, այլ միայն դրանց լուծումները:

ЛОГИКА АНТИЧНОЙ ФИЛОСОФИИ И ПОСТПОЗИТИВИСТСКАЯ КОНЦЕПЦИЯ РЕКОНСТРУКЦИИ НАУКИ

ТАНАНЯН Г. Г., ТАНАНЯН О. Г .

Резюме

История античной философии рассматривается с точки зрения постпозитивистской концепции реконструкции науки – в аспекте последовательного чередования научных парадигм или “исследовательских программ”, что дает возможность более доступного следования имманентной логике ее развития.

THE LOGIC OF ANCIENT PHILOSOPHY AND POSTPOSITIVIST CONCEPT OF SCIENCE RECONSTRUCTION

G. TANANYAN, H. TANANYAN

Abstract

The history of the Ancient Philosophy is researched from the perspective of reconstruction postpositivist science – in the aspect of the sequence of the scientific paradigms or research programs allowing a more affordable examination of the immanent logic of its development.